չափահասից և մի՛ գաղտագողի յամուսնացողացն և պարտիք ծխատէրք լիցին քննել, թէ արդարև յօժարամիտ սիրո՞վ և ազա՞տ կամօք ցանկան ընկերակցութեան հարսնացուն և փեսացուն, եթէ յոչ կամաց կամ յարտաքին ստիպողական ինչ պատճառաց յայն բերեալ իցեն բանութեամբ, քանզի ամենայն չարիք յամուսնական կեանս ծագին յանհեռատես ընտրութենէ, ի չհասունութենէ և յանազատ սիրոյ, որոց մեծագոյն մասանց, ցաւելով սանեմք, միջնորդք՝ տանելցք լինին զանազան գժտամարք՝ և հետևանք այսօրինակ ամուսնութեանց բանի սէր, անհամաձայնութիւն, կագ և կռիւ և այլ այսօրինի բաժանումն և կենակցութիւն ըստ հաճոյս, որոյ ազգավնաս և հակաքրիստոնեական արդիւնս օր ըստ օրէ յաճախեալ, անկումն և քայքայումն սիրեցեալ հօտին Ս. Լուսաւորչին տեսանեմք։

Ակնյայս եմք զի շրջաբերականս այս բազմաց լիցի պատճառ բարութեան, Վարդապետաց նիւթ քարոզութեան առ հաւատացեալ ինքեանց հօտ, Քահանայից՝ եւ առաւել ի խրատ և ի զգուշութիւն, յորոց պահանջելոց է Աստուած զարիւնն անմեղաց յաւուր դատաստանի. ծնողաց՝ ի յորդոր, որոց ցանկալի է երջանկութիւն և բարօրութիւն սիրեցեալ զաւակաց իւրեանց, ամուսնացողաց՝ ի զգաստութիւն, որոց նպատակ է և քաղցր ապագայ կենցաղավարութիւն և մշտնջենական սէր և խաղաղութիւն յընտանեկան կեանս

Աղօթակից հարց եկեղեցւոյս և աղօթարար Սիրեցեալ Ժողովրդեանս՝

ի վերայ իսկականին ստորագրեալ է
Նորին Սրբութիւն
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 24 Փետրուարի 1900 ամի
և ըստ տոմարիս ՌՅԽԹ.
ի Հայրապետութեան Մերում Է. ամի
յԱրարատ. Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս բացակայ համարելոյ զանդամն Սինոդի զՏ. Աշոտ վարդապետն միամնեայ ժամանակաւ. Թ. 153.

— Յանուն Ամեն. պատրիարքի Կ. Պօլսոյ յաղագս գրելոյ Տ. Յովսէփ եպիսկոպոսի Սարաճեան յԱմերիկա թոյլատրել առնել հանգանակութիւն ի մերազնեայս ի նպաստ Հոգ. դպրանոցի միոյ ի Կիլիկեայ. Թ. 161.

— Յանուն Գեր. Թեմակ. Շամախւոյ Նայի Արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ ըդկարգումն Տ. Եփրեմ վարդապետի Սուքիասեան ի վանահայր վանուցն Սաղիանու և Նախագահ Կոնսիստ. Շամախւոյ. Թ. 166.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի ի վերոգրեալ միտս. Թ. 170.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ թոյլատրութիւնք ոմանց պսակաց. Թ. 173.

— Յանուն Տ. Տիրայր վարդապետի, որով յանձնեցաւ նմա ի քննել զերկուս բողոքս, որք զՅովսէփայ Մելիք Շահնազարեանց. Թ. 177.

Կոնդակ օրհնութեան և քաջալերութեան յանուն «Որբախնամ ընկերութեան Վասպուրականի», որ ի Դահլիճ Եգիպտոսի. Թ. 174.